

3974

281-6  
S-55

281.6  
У-55




1886

2818

W. 211  
280  
909-06

281.6  
U-55



A circular library stamp with a decorative border featuring a star at the top left and a fish-like illustration at the bottom left. The text inside the border reads "Tbilisi Public Library named after I. M. Maisuradze". The date "7/11-1922" is stamped in the center.

## ՄԱՍԵՍՅ ՈՐԴԻՈՅՆ, ԵՂԻՇԵՒ

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՔՆԱՐԵ

Ի հանդիսի Օծման նորընտիր Հայրապետի և  
Ծայրագոյն Պատրիարքի Արարատեան Սռարե-  
լական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ-  
էջմիածնի Տեառն և Տեառն ՄԱԿԱՐԱՅ Ա.

ի 10-ի Նոյեմբերի, 1885 ամի, ի Ս. Էջմիածին

Գրեգոր կ 5 նոյեմբեր (1885) ամի կ Տփեսիւ.

Սուրբ Էջմիածինը, այն է՝ Հայաստանեալց Եկեղեցւոյ Մեծ Դշոյն, իմ գերերջանիկ և պանծալի Մայրը՝ որոյ անարատ արգանդից, Հոգեոր երկամքք ծնուած եմք Հայերս, այսօր՝ (որ ներկայ 1885 թուականի նոյեմբերի 10 երրորդ օրն է), իւր նորընտիր Փեսալին—Տ. Տ. ՄՈԿԱՐ Ա. Ծալբագոյն Պատրիարքի և ամենայն Հայոց Կաթուղիկոսի Մայրապոյն Պատրիարքի տօնուած, իւր Միաբանական Սուրբ Հարց, 08ման հանդէսն է տօնում, իւր Հայոց առաջնորդութեան, և բոլոր Եկեղեցեաց Հայկական ընդհանուր ժողովրդէան, և բոլոր Եկեղեցեաց Ռւխտի հետ:

Հայոց Գրիգորին, Սուրբ Լուսաւորչի ալև ՎԵՀ  
Սրբավայրը՝ որ Հայոց պարծանաց միակ Գահն է՝ արդէն  
երկու տարի և ինն ամսից իվեր՝ զրկուած լինելով իւր նախ-  
կին Գահակալից՝ ի Տէր հանգուցեալ երջանկայիշատակ Գէ-  
որդ Դ. քաջարժուն Հայրապետից, կարտասուէր և կսգայր  
իւր անգին կորուստը՝ ի տեսիլ աշխարհի, հրեշտակաց և  
մարդկան. արկանելով նաև բոլոր Հայ ազգը և Հայ Եկեղե-  
ցին, և Դպրոցներն և ծեմարանք, և ալլ և ալլ հաստատու-  
թիւնքն՝ սրտակէզ տրտմութեան, վշտերի, և տեսակ տեսակ  
մտաւորական և բարոյական աղէտների մէջ:

Ո՞հ, այն օրերը, այն տրտասուալից և տիրագին ժա-  
մերը՝ արդարե, Միածնաէջ Աթոռոյն, — Արարատեան Մայր  
Եկեղեցւոյ հոգեկան ներքին վիշտը, և սրտին կսկիծը և հա-  
ռաչանքը և տեսարանը՝ շատ և շատ ցաւալի և քստմնելի  
էր նաև ամէն մի մտածող և զգայուն Հայի համար, ճշմա-  
րիտ և բարեսէր Հայի սիրտ ունեցողների համար:

Արդեօք, ալս թախծալի և արտասուելի ժամանակնե-  
րին՝ ընդհանուր Հայ ազգի հետ ի միասին՝ մենք ևս բնչ  
էինք տեսնում և շօշափում. — Աստուածայարկ Սուրբ տաճա-  
րի լուսեղէն Խորանին երեսը՝ մի սեաւ Վարագոյր. կարծում  
էիր, թէ՝ աշխարհապարփակ տիեզերակալ մութը (թոհ և  
բոհ), տիրել է Մայր Աթոռին. որով ցոյց կ'տար, թէ՝ ամէն  
կոյսերի Խոկուհին, Լուսածին Ծնող Առաքելական ուղղա-  
փառ Սուրբ Եկեղեցին՝ զրկուել է իւր բազմահանձար և բազ-  
մարդիւն Սուրբ Փեսալից. և իւր ողբաձայն պղնձի, — Զանգակի՝  
խորհրդական լեզուով ևս՝ սփոռում էր իւր անմահ Աթոռա-  
կալի անակնկալ մահուան գոլժը՝ բոլոր աշխարհի մէջ, իսուզ  
հրաւիրելով և Հայկական ժողովուրդը. Որոյ՝ (Լ. Գահի)  
տրտմութեան և թշուառութեան կալծակները՝ թափում էին  
ամէնաբարձր դասակարգերից սկսած՝ մինչև անհաց, անտէր,  
անտաւն, և աննշան լետին աղքատին, ստրկին, Հովուին և  
Մշակին, և Գիւղացու անպաճոյն խիւղի մէջ: Տիրագին Հայ-  
ով՝ իւր (Եջմիածնի) հետի միասին՝ լալիս էին և Հայկա-

կոն Եկեղեցեաց և Մենաստանաց և Վանօրէից բոլոր զան-  
դակներն՝ ձայն տալով ամէնքիս, թէ՝ «Ժուեաւ, սլացաւ  
Ձեր քաջ Հայրապետն, ով Հայեր. այսուհետև տեսնում էք  
Նորան, ո՛հ, անլոյս, անարե, մութ պաստառի քօղով՝  
անգութ մահուան օրօրոցում, — Դագաղում, չորս փայտի մէջ.  
սրբափալլ Գլուխը և պայծառ ծակատը՝ տիրատեսիլ Դա-  
գաղի թաւիշեալ սեւ բարձի վերալ հանգչեցուցած. այն  
Գլուխը՝ որ գեռ ևս պիտի գործէր իւր նազելի Հայ ազգի  
ներկալ և ապագայ սերունդների լուսաւորութեան, կրթու-  
թեան, բարոյականութեան և յառաջադիմութեան համար:»  
Թերևս, բոլոր Հայկազունք՝ իւրեանց սգալից աչքերը դէպի  
ալս Հոգեւոր Աթոռուր դարձուցած՝ փնտուում էին իւրեանց  
Հովիւր՝ և լալիս էին անդադար, ազգի ողբերով, ինչ-  
պէս երեւմն չին Խորայէլ՝ տիսուր և սգաւոր, ձեռըն ի  
ծնոտի՝ Բաբելացւոց գետերի ափերում նստած՝ նոյն իսկ  
օտար, անծանօթ երկրի գետերի ալիքներին էր խառնում  
իւր արտասուքը, և ողբերն ու ցաւերը. բայց և ալսպէս՝  
Հայոց Աշխարհի տարաբաղդ որդիքը՝ առաւել զգայուն և վառ  
երևակայութեամբ և անսահման սգով՝ հառաչում էին շատ  
աղէտալի. — » Ուր է մեր Հովիւր, մեր լուսատու Արփին,  
մեր Խնամատարը, ո՞հ, ուր գնաց նա...»: Ծաղկանց Թագու-  
հի Վարդն, և Շուշան, Քոլը և Եղբար, — Ազգային երկսեռ  
Դպրոցներն ևս՝ Ախուրեան գետի պղտոր և արիւնոտ ալեաց  
մէջ ընկած՝ սե ազգեստ, տիրագէմ, աղի արցունքներն կուրծ-  
քերին վերալ՝ ողբով, սգով տրորփած, կեանք, խնդութիւն  
և ուրախութիւն կորուցած՝ իւրեանց Պետն էին որոնում,  
և հարցանում. կարծում էին, թէ՝ ալիքներն զայն տարին.  
— » Աւետաբեր Հողմիկ, և ալիք հայրենեաց՝ մի թէ՝ ունիք  
մի լուր, և կամ դուք ևս ողբայք և սգայք զԴիտապետն  
Հայկազանց.» ափսոս, շատ ափսոս, և ալիք և Հողմիկ՝ կա-  
րեվէր, ողբանուէր, անդէն և եթ՝ հեծեծեցին և լացին. — »  
Նա ի գագաղ, ... ի գագաղ, մի ալլ ևս փնտռէք, ով  
Հայք...» կանքեցին, Աւաղ մեզ, և ալիք և վտակներ, իմ

Հալրենի գետակն Հրազդան, Երասխ և Մասիս, Ալբարատ և Արագած, ու Անին ևս՝ իւր անթագ, անապակ, և սգապատ Գլուխը՝ առաւել ևս ի հող խոնարհեցուցած՝ սգում էր անտանելի, երբ տեսնում էր՝ այո՛, — իւր աննկուն Հալրապիտի Եշանական Դաւազանը՝ վայր ընկած ի սնար. Գահը՝ նուիրական վեհ Գահը, որ սուրբ Թաղդէի և Բարդուղիմեալ Մեծ Առաքեալների ձեռօք է հաստատուած, իւր մաքուր Մարմին Յիսուսի գըլիին՝ Աւետարանի ուղիղ սկզբանց և ուղղափառ Հաւատոյ Դաւանութեան հիման վերալ՝ ո՞չ, սեաւ թաւիշով և մութքողով էր ծածկուած. — գեղապանծ Սուրբ Թաղը, որ արևի նման շողշողում էր՝ սգաթոլր շըզարշով քօղարկուած. Նափորտապատն և Վակաս, Պազպանք և Շուրջառք՝ անշուք, անծիծաղ՝ ընդ տիրական մութքով ծալուած, ցան և ցիր ընկած. անուշահոտ խնկոց Սուրբ Սեղաններն, փրկարար Խաչերն, Աւետարաններն և Կտակարանք, Շնորհաբաշ Սկիհներն, բուրփառք և ցնծղալք, Նահապետաց և Մարտիրոսաց՝ Կուսանաց և ծգնաւորաց՝ Հալրապետաց և Առաքելոց՝ խնկելի, պաշտելի և երկրպագելի նշխարներին վերալ՝ սեաւ պատանք ձգած: Եւ աչա՛ այստեղ, այս աղէտալի ժամին՝ կտեսնէիր հոգեկան աչօք՝ Հայաստաննեալց Եկեղեցւոյ Առաքելաշնորհ Սուրբ Հարց՝ սքանչելատեսիլ ծողովը, մի այնպիսի Աստուածատեսիլ հոգեխառնութեամբ, որին ընդարձակ և ճիշդ նկարսգրութիւնը՝ անզօր է իմ զըիչը այստեղ արձանագրելու. — ո՞վ հրաշալեացս, Երանելեաց հոգիք՝ կարծես, ոոյն իոկ կենդանի սուրբ Հարց հետ՝ Միածնաէջ Տան մեծախորհուրդ սուրբ Սեղանի, Աստուածահաստատ Երկնաշէն Խորանի սրբազնացեալ Բեմի վերալ՝ դէմ տու դէմ շուրջառներն առած՝ կանգնած էին հանգուցեալ Հալրապետի Դագաղին չորս բոլորը. — Պալհաւեան սուրբ ծերունին — Մեծն Ներսէս՝ իւր հրեշտակատեսիլ դէմօք և հոգեշունչ լեզուով. Գիւտ, և սուրբն Մեսրովք, Հայկական գըլերը կուրծքին վերալ՝ երկնքի աստղերից աւելի պայծառ. և շողշողուն և փառտւոր. — Ներսէս չորրորդ, Երանաշնորհն Գրիգորիոս՝ իւր

Աստուածալին Քնարն, սուրբ Նարեկը իձեռին բոնած. Մանդակունին և Յովհան, Խորենացին Մովսէս՝ իւր ճարտասան, պատմաբան լեզուով. Իւահիթ անյաղթն, Եղիշէն, Մամբրէն, Եզնիկ և Կորիւն, Գոշ Միիթար, և Ղազար. Գրիգոր Արշարունին և Խոսրով. Գրիգոր մագիստրոս, Գրիգոր Լաստիվերգեցին, մի այլ համազ գեստով և պայծառութեամ. Սարգիս Շնորհալին, Ներսէս Լամբրոնացին, Սուրբ Ղեոնդ երէց, և Լուսաւորիչն Հայոց Սուրբն Գրիգորիոս. որոյ փառաւոր և անմահ անուան հետ՝ ինչպէս կապուած է մեր Եկեղեցին և Պատմութիւնը և Հայ ազգը, նոյնպէս և այն ամէն, վերոյգրեալ մեր երանելի նախնիքը և իւր Յաջորդներն և Փառանդներն ևս՝ անմարմին հոգւով միացած իւր հետ՝ ինչպէս իւրեանց մարմնաւոր արմատին հետ՝ հրեշտակալին, հրեշէն երգերով, իրենց նախորդ Մեծ Գահակալին, Հայկական Եկեղեցւոց նախկին Պետին և մեր Պաշտպանին, ներբողականներ հիւսելով՝ կը հբաւիրէին, որ կնքէ վաղամեռիկ Հայրապետի սրբազն մարմինը՝ իւր (հանգուցեալի) Հայրենի Շիրմի մէջ. և կարծես, անդէն և եթ՝ կը նորոգուէր, և կը մարմնանալը Եկեղեցւոյ Պերճախօս Զայնը, — կ'ատենաբաններ, և կ'աղօթէր Լուսաւորիչը, Հայցելով Յիսուսից՝ որ զերջանիկ Հայրապետն զծէր Գէորգ Պ. Երկնախոց կարգը դասէ, երկնալին Խորանաց մէջ:

Իսկ ալսօր, գոհացողական և ուրախական՝ Փառատրութիւն ափեզերաց Ատեղծողին, որ Երկրի մէջ նկարուած՝ Երկնալին սուրբ Խորանը, Առաքելական Մայր Եկեղեցին Սուրբ Եջմիածնի, Դշխուհեաց Դշխոյն, Խոկուհեաց Խոկուհին վարառնելով իւր ալրիութեան տրտմալի, սգալի քողը՝ հըրաւէր է կարգում բոլոր աշխարհին և ընդհանուր Հայ ազգին, թէ. — ահա, իմ նորընտիր Փեսան, զծէր Մակար Հայրապետ՝ բազմած է իւր վեհ Գահի վերալ. որի առաջ՝ ծունը են իջանում իւր Ուխտի սուրբ Հարք և Հաւատոյ Մանկսւնք. և իւր Կրօնական ազդարար փողով՝ զանգակի քաղցը և ուրախ հնչմամբ ևս՝ այս պայծառ և նուիրական օրը՝ կաւետէ՝ ո՞չ միայն Հայոց ընհանուր Եկեղեցիներին և գողովրդեան, առ

և Մենաստանաց և Վանօրէից, և Դպրոցներին և ծեմարաններին, և այն ամէն Ազգային Կրօնական և Բարոյական հաստատութիւններին, որոնք գտնվում են զանազան Տէրութեանց իշխանութեան ներքոյ:

Ես ևս՝ Հայկական ազգի ընդհանրութեան հետ, նորա՝ այս Կրօնական և Հոգեկան ընդհանրութեան և ապահով Դրութեան մէջէն, իմ, —» մի կաթիլ արտասուքը « այստեղ արձանագրելուց յետոյ՝ առանձին թերթի վերայ, չեմ կարող անտարբեր և անզգայ մնալ՝ իբրև կոճղանապատի, և չգրել մեր նորաօծ Քահանայապետի ընտրութեան և Անձնաւորութեան հարցի վերաբերմամբ՝ այլ ևս մի քանի խօսք: Նորապսակ Վեհափառի ընտրութիւնը՝ միշտ պէտք է մնալ Ազգային և Եկեղեցական մեզ ժամանակակից Պատմութեանց մէջ՝ իբրև մի չքնաղ նախազաղափար Ռուսիոյ Օգոստափառ Կայսեր Աղեքսանդր Գի, Բարձրագոյն Խնամակալութեան, Իմաստուն Տեսչութեան, և Մարդասիրութեան. ուստի, և աներկբայելի է՝ ճշմարիտ է, որ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱ. ԿԱՆ ՄԱՆՈՒԹԵԱՆ կարեկցութիւնը, և խնամքը և սէրը՝ շատ մեծ և անսահման է իւր հպատակ Հայ ազգի վերայ. որ և լաւ իմանալով մեր Հայրապետական Գահի նշանակութիւնը՝ ամէնողորմածաբար բարեհաճեցաւ՝ հաստատել՝ այդ Կրօնական վեհ Գահի արժանաւոր Փոխանորդ՝ զՏէր ՄԱԿԱՐ Ա. Վեհափառն. որի ամենահաւատարիմ ծառալութիւնքն առաջի Օգոստափառ Պետութեանց Ռուսիոյ և Հայաստաննեաց Եկեղեցւոյ՝ իվաղ ժամանակաց հետէ, յալտնի էին Մեծ Արքային:

Գալով Նորին Վեհափառութեան անձնական կատարելութեանց վերայ՝ այսպէս կենթագրեմ, և կը հաստատեմ, որ նա՝ Հայաստանի Եկեղեցւոյ այժմեան Անկիւնաքարերից և Գոհհարներից մինն է. և միանգամայն, աննկուն Պաշտպան Մայր Աթոռին՝ և Ազգի շահերին և իրաւունքներին. և մեր նախնի Սուրբ Հարց Օրինաց Ուխտին և Կանոնաց սահմաններին ևս՝ քաջարթուն հըսկող և վերադիտող. լայնաթորհուրդ, արշահայեաց, մեծիմաստ, հեռատես, երկայնամիտ,

ներօղ, գնահատող, ճանաչօղ և վարձատրօղ, անոխակալ և անփառասէր և ուսումնասէր. նա մանաւանդ՝ վեհանձն և ծանրակշիռ, որոնք իւր Քաղաքականութեան և Իշխանական վարչութեան՝ գլխաւոր յատկանիշներն են: Այսպէս ուրեմն, ով իմ սիրելի և անմոռանալի հայեր, Հայ մատենագիրներ, աշխոյիքոգի երիտասարդներ, Հայ մամուլներ, Խմբագրապետներ և Բանաստեղծներ, Հրապարակախօսներ և Լեզուագէտներ, Հայ ուսուցիչներ, ուսուցչուհիներ, և Ուսումնարանական և ծեմարանական Տեսչներ, Հայ հոգեորականներ, Հարուստներ և Իշխանաւորներ, ահաւասիկ՝ մեք ամէնքս, աչքի առաջև ունենալուց վերոյգրեալ հանգամանքներն և բոլոր ցոլցերն՝ պէտքէ վերանորոգենք մեր սրտի և հոգւոր մէջ, այն փալլուն լոյսերն՝ որ երբեմն, շողշողում էին մեր գիմաց ազգի ազգի երևոյթներով, Կաթուղիկոսական ընտրելեաց հարցերի մէջ՝ Ազգի ներկայ և ապագայ բարօրութեան, լուսաւորութեան, կրթութեան և յառաջադիմութեան մասին. աներկմիտ լի նելով, որ մեր Նորընտիր Վեհափառ Հայրապետը՝ իւր Ազգալոյս ճառագալթներով՝ ամէն խաւար, ամէն մութ հալածելուց յետոյ՝ ինչպէս Սուլքը Էջմիածնի հորիզոնից (եթէ գանվում է), նոյնպէս և իւր անընդմիջական Իշխանութեան ներքոյ գտնուած Հայկական բոլոր Եկեղեցիներից և Դպրոցներից, ծեմարաններից և Վանքերից, և ուրիշ որ և իցէ Բարոյական հաստատութիւններից, այնուհետեւ՝ չպիտի խնալէ ոչ մի միջոց Ազգային Առուսաւորութեան գործի ասպարիզում՝ Ազգային Դաստիարակութեան, կրթութեան, Բարոյականութեան և յառաջնացութեան համար. և իբրև մի Սստուածալին Առիւծ, իւր Հերոսական ուսերու վերայ առած Հայ ժողովուրդը, և Նորա՝ այսինքն ժողովրդեան, փառքը, պատիւը և սէրն ևս՝ իբրու Մեսրովքեան անջինջ նշանագրեր, նոր ոսկետառեր, իւր սըբափալլ կուրծքին վերայ գրոշմած՝ հսկայի քայլերով պիտի լառաջ գնայ՝ Եւրոպական լուսաւորութեան, կրթութեան, հիմնաւոր դաստիարակութեան, և այլ և այլ Քաղաքագիտական և կենցաղօգուտ զարգացմանց հասանել՝ նախնական

գեղեցիկ բարեպաշտութեամբ, որն որ մեր Պապերուն միակ  
պարծանք էր՝ և անգին ժառանգութիւնը:

Եւ ահա, այս հաստատուն յոյսն և փափագն էր՝ որ և  
իմ սիրտն ու գրիչը շարժեց՝ Ազգին ներկայ Պահանջն և  
Դրութիւնը գիտնալով՝ առ այժմս այսքան միայն գրել, իմ  
Հայկական Քնարին թելերովը. որ և ի վերջոյ՝ մաղթելով  
Փրկչից, որ այսօր՝ իւր Տիրական Աթոռում բազմող նորապսակ  
Քահանայապետը և Արքանընտիր Գահակալն Սուրբ Կաթուղիկէ  
Էջմիածնի՝ մեզ լուսատու շնորհէ, և միշտ զօրաւոր պահէ  
Իւր Եշխանական Գերազահ Տեսչութեան մէջ՝ ի փառս Ազգի  
և Եկեղեցւոյ՝ խոնարհմ ի համբոյր Աստուածարեալ Աջոյ  
Նորին Վեհափառութեան.

Եւ կամ և մնամ, Ազգի և Եկեղեցւոյ միշտ անձ  
նանուէր՝

Եղիշէ վարժապետ Մեծատունեան:



## ԿԱԹՈՒԼ ՄԻ ԱՐՏԱՍՈՒԻՔ.

Ի գոխումն յաստեացո,

ՏԵՌ ԳԵՌՈՐԴ Դ.

ԱՊԳԱՍԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԵՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:

Յո՛լժ սգաւոր հնչէ ահա, զիւր Զանգակ՝  
Էջմիածին, ծածկեալ ի քօղ սեորակ. —

«Ալրիացն», ալրի մնամ, մինչև ցերբ...  
Հայաստանեալքս չաղասցեն, ասա, լերբ...»

Մասիս: Գրգուռ, և Արագած, և Անի,  
Տիրատեսիլ արտասուեսցեն, ո՛հ, քանի.

Եւ տիրամածն այս Վեհ Աթոռ Գրիգորի՝  
Սևասքօղեալ, քանի մնալ որբ, ալրի.

Սեղանք խնկոց՝ և Վարագոլը Տաճարիս,  
Սաղմոսարանք և Շարականք Սուրբ Բեմիս,

Բազպանք, շուրջառք, Խաչք և Սկիհք Շնորհաց,  
Եւ Վակասին աչք ի տրոր՝ կան ի լաց:

Մովսիսական Ցուպդ և Խոյրն սգաթոլը,  
Առ սնարաւոդ ալդ՝ ցերբ մնան միայնոլը.

Ո՞վ Տէր Գէորգ, Հովհեղ Քաջ և Արի,

Անմահացար, ... 'և անմահասցիս յաշխարհի.  
Զինչ նոր Մովսէս երեւել մեզ՝ արդարեւ,  
նոր իմն Յեսու, նոր Մեսրոպավ, Սահակ Պարթեւ.  
Կամ' նոր Ներսէս, և կամ' Յովսէփ յանկալի, —  
Բարոյական կերակրիչ Քռ Հօտի:  
Ի Արձանի դրոշմեցաւ Քո անուն,  
Ո՛չ յոսկեղէն, այլ՝ ի մեր սիրտ գդալուն.  
Հետք Քոց վալրաց՝ այլ ո՛չ երբէք ջնջեսցին,  
Քիտեմ' յաւիս, զի ծեմարանդ փոլիթ թողեր, ...  
Զայն որ յանուն քո, «Գէորգեան» կոչեցեր.  
Զայն՝ որ քրտամբք քո և Ազգիդ՝ կառուցեր.  
Ընդ Հովանեաւ Մալը Աթոռոյդ՝ անվեհեր.  
Մի մտածեր, խաղաղ ննջեա ի Եկրմիդ.  
Նուիրական է Դա՝ Աւանդ սուրբ Ուխտիդ.  
Եւ թէ՝ ցորչափ կացցէ մնասցէ Հալոց Տուն,  
Դարուց ի դարս՝ միշտ պանծասցի Քո անուն.  
Նորոգեսցի որպէս փիւնիկ՝ ամէն օր,  
Յերգս արկեալ զերջանիկ Հալրդ՝ օր իլօր։  
Դու՝ ո՛չ միան զայս ծեմարան և զԱթոռ՝  
Հաներ ի լոյս, այլ զԴպրոցս բոլոր՝  
Ի լոյս մտաց, ի գիտութեան՝ Դու ածեր.  
Քոլը և Եղբայր՝ ի խաւարէ փրկեցեր։  
Զտպարտնս, և «զԱրարատ» ամսագիր՝  
Մաղկեցուցեր, իմաստութեամբդ երկնաձիր.  
Ճրագունք վառին, սփոփական լուսարփիք,  
Շուրջ զԵկրմաւդ՝ նոքտ Հալոց են մանկտիք.  
Նոցա հտուաչք՝ չերթան ի բաց՝ ի Եկրմէդ,  
Նոցա արցունք՝ ի սուրբ ոսկերս Քո յաւէտ։  
Եւ ցորչափ քիւտն հեղեր ի սէր քո Ազգի՝  
Մարգարտազարդ Թագ ձեւացաւ պանծալի.  
Եւ ի Թագին Քում Հովանի՛ փթթեսցին,  
Վարդն և Շուշան, Արմաւենին, Զիթենին։

Մէ վրդովիր, ծաղկունք Քո՛ ո՛չ թարշամին,  
Օրհնեալ է Հողն՝ յոր սերմն արկեր Դու՛ անգին.  
Զի չե Աչք, Զեռն աւարառու չիք և աստ,...  
Է Միութիւն Սիրոյ՝ և Մեք կամք զգաստ,....:  
Գալլք և Վագերք, Արջք և Առիւծք, Օձ, Կարիճք,  
Մէ իշխեսցեն հպիլ ի Սա, և Ուտիճք:  
Համբուր Երմիդ. հազար համբոյր ով Հայր մեր,  
Հալցեմք, ընկալ զայս արտասուս վշտաբեր,  
Ոլլամք զարև կենաց Վեհիդ՝ շատ ողբամք,  
Զրկեալք ի Քէն, ցորչափ ՚ւ ի Քէն ամբաժ կամք.  
Հիւծեալ մաշին Մանկունք նորոյ Սիօնի,  
Ցերք լուեցեն այլ ևս ի ձայն Զանգակի,  
Քէ՛—»Ահա, գայ Փեսալն, ելէք յԱտենի....»—  
....այրէ՛ մնամ, յամ, և սգամ թախնձայի...

ԵՂԻՇԵ ՎԱՐԺԱՊԵՏ ՄԵԾԱՏՈՒՆԵԱՆ

յԱխալցխայ, ի 11-ն Ապրիլի,  
1884 ամի:

Տարբերակ հ5-ն Յունիսի 1886 թվին և Տիկիւթյուն



Доз. Цензурою Тиф. 17 Декабря, 1885 г.

Тип. М. Вартаняна, Тройц. пер., д. № 11.

3974

ՀՀ Ազգային գրադարան

3852